խաւ» (անդ)։ — Յունուար 29. «Քօմուրճու տղան *(Տէր Մարտիրոսն) դարձեալ գայրացոյց զմեզ, վասն իմ մեղացն է» (թղ. 142բ)։ — Փետրուար* 5. «*Յետ ժամուն Քօմուրճին աւելի եւ պակաս՝ ընդ ճանսուզին» (անդ)։ — Փետր.* 16. «Քօմուրճուն տղան *եկաւ գինով, բայց ճանապարհին շատ ծեծ էին տուած թուրքերն նորա» (թղ.* 143ա)։ — *Մարտ* 7. «*Ի մէջ երեկոյի ժամին* Քօմուրճու տղան *եկաւ՝ խենթութիւն արաւ» (թղ.* 143բ)։ — *Մայիս* 10. «*Գրիգոր սարկաւագն և բազումք ի ճաշ, և* Քօմուրճին *և Իսրայէլ էրէցն գինով օրտուէն եկին» (թղ.* 146ա)։ — *Յունիս* 13. «Քօմուրճի Գեորգն *(Տէր Մարտիրոս) առ մեզ աճամ իրիցոնն, և ելեալ գնացին» (թղ.* 147ա)։ — *Դեկտ.* 18. «*Սեղան ի* Տէր Մարտիրոսենց» *(թղ.* 153բ)։ — *Դեկտ.* 19 *և* 20. «*Հաց ի* Տէր Մարտիրոսենց» *(անդ)։ — Դեկտ* 24. «Քօմուրճոյ Տէր Մարտիրոսի *կինն խաչսահաթին քէսէ ողարկեց» (թղ.* 154ա)։ — 1699 *Փետր.* 16. «Տէր Մարտիրոսն *փախլաւա» (թղ.* 232ա)։ — 1700 *Յունիս* 4. «Մարտիրոս *երեցն եկաւ ի Սուլիմանասարիր. մուզուր գրին ի վերայ նորա. փախեր էր ի կորուստն՝ չէին գտած զնա» (թղ.* 245ա)։ — *Նոյ.* 11. «*Հարսանիք* Տէր Մարտիրոսի *անարձագ Աստուածատուրն» (թղ.* 249ա)։ — 1701 *Յունուար* 8. «Տէր Մարտիրոսն *փախլաւա էր ողարկեր մեզ» (թղ.* 251ա)։ — *Փետր.* 12. «Տէր Մարտիրոսն *եկաւ. խելօքացել լաւ» (թղ.* 252ա)։

Այսքան են Տէր Մարտիրոսի մասին Ամգեցիի յուշագրութիւնները։ Ամենէն վերջինով, գրուած Երուսաղէմի մէջ 1703 *Հոկտ.* 7*ին, կ'արձանագրէ անոր մահը, որ տեղի ունեցած է Կ. Պոլսոյ մէջ նոյն տարուան Օգոստոս* 16*ին, Վերափոխման տօնի մեռելոցի օրը.* «*Լուաք զ*Քօմուրճի Տէր Գեորգին *(Տէր Մարտիրոսին) զմահն՝ Աստուածածնի երկուշաբաթին (թղ.* 284բ)։